

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ն. ԿՈՍԻԳԻՆԻՆ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԻ ԶՈՀՎԵԼՈՒ ՏԽՈՒՐ ԱՌԻԹՈՎ

Մոսկվա

Համայն մարդկության հիացմունքի առարկա եղող սովետական երեք աստղանավորդներ՝ Գ. Տ. Դոբրովոլսկի, Վ. Ն. Վոլկով, Վ. Ի. Պացաև, իրենց հոյակապ առաքելությունը ի կատար ածելուց հետո, մեկնեցին մեր աշխարհից դեպի հավիտենականություն ինչպես առասպելական հերոսներ:

Հավերժական լո՛ւյս և փա՛ռք նրանց հիշատակին և նրանց սխրագործության:

Փա՛ռք սովետական մարդուն և գիտության:

Հանուն հայ առաքելական եկեղեցու ընդունեցեք Մեր ամենախորազգաց ցավակցությունը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1-ը հուլիսի 1971 թ.,
Ս. Էջմիածին